ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՆՈՐ ՀԱՐԹԱԿ. ԱՌՑԱՆՑ ԿՈՆՍԻԼԻՈՒՄ

«Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցավ Բժշկական կամավոր միություն ընդդեմ **COVID-19**-ի, Հայկական բժշկական ասոցիացիայի և ՀՀ-ում գործող բժշկական տարբեր ասոցիացիաների և մասնագիտական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպում, որի նպատակն էր համատեղ արդյունավետ փոխգործակցությամբ ձևավորել մեկ միասնական հարթակ՝ կորոնավիրուսային հիվանդության կասկածով և հաստատված պացիենտներին սպասարկում ապահովող բուժկենտրոնների և առողջության առաջնային պահպանման հաստատությունների համար:

Հանդիպման սկզբում Առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Բալարչյանը նշեց, որ առցանց կոնսիլիում հարթակի ստեղծման նպատակն է մասնագիտական ներուժի միավորմամբ հաղթահարել նոր կորոնավիրուսային համավարակը՝ իրականացնելով ոչ միայն խորհրդատվական, այլև մարտավարական գործողություններ: Հարթակում կքննարկվեն կորոնավիրուսային վարակ ունեցող պացիենտների դեպքերը՝ բուժումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Կոնսիլիումի կազմում ներգրավված են լինելու բժիշկ -համակարգողներ, բժիշկ- խորհրդատուներ, տեխնիկական համակարգողներ, ներկայացուցիչ յուրաքանչյուր բուժհաստատությունից:

Կոնսիլիում հրավիրելու ընթացակարգը գործելու է հետևյալ մեխանիզմով՝ *հիվանդանոցի ներկայացուցիչը բժիշկ-համակարգողին հայտ է ներկայացնում և տրամադրում է վարակակրի տվյալները, դրանից հետո բժիշկ-համակարգողը կապ է հաստատում բժիշկ-խորհրդատուների հետ և նրանց տրամադրում վարակակրի տվյալները, այնուհետև տեխնիկական համակարգողը տրամադրում է կոնսիլիումի միացման տվյալները և նշված ժամից 15 րոպե առաջ բացվում է համակարգը:*

Կոնսիլիումի ընթացքում բժիշկ-համակարգողը գրի է առնում մասնակից բժիշկների եզրակացությունները, որոնք ձայնագրվում և փաստաթղթերի հետ միասին արխիվացվում են:

COVID -19 առցանց կոնսիլիում հարթակի շրջանակներում իրականացվելու են նաև բժշկական ուղեցույցների մշակում, բժիշկների բազաների ստեղծում, տեխնիկական ուղեցույցներ և տեսահոլովակների պատրաստում:

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Դասընթաց Կավասակիի հիվանդության վերաբերյալ



Առողջապահության ազգային ինստիտուտում հերթական դասընթացը նվիրված էր երեխաների շրջանում Կավասակիի հիվանդությանը, որի դեպքերը Հայաստանում արձանագրվեցին կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Դասընթացը նախատեսված էր հանրապետության մարզերի բոլոր մանկաբույժների համար:

«Կավասակիի հիվանդություն» թեմայով վեբինարն անցկացվեց Zoom հարթակի միջոցով: Վեբինարը վարեց **Ուիգմոր Քլինիք** կլինիկայի մանկաբուժական ծառայության ղեկավար Հրաչուհի Ղազարյանը:

Վեբինարին մասնակցեցին 250 բուժաշխատող:



ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Ուղեցույց BWH-ի բժիշկների կողմից

Բժշկական կամավոր միության, Առողջապահության ազգային ինստիտուտի և Առողջապահության նախարարության սերտ համագործակցությամբ մեկնարկել են Հարվարդի կլինիկական հիվանդանոցի կողմից մշակված **COVID-19**-ի ուղեցույցի թարգմանչական աշխատանքները:

Ուղեցույցը ստեղծվել է Հարվարդի երկրորդ խոշոր կլինիկական հիվանդանոցի Brigham and Women's Hospital (BWH)-ի բժիշկների կողմից՝ հիմք ընդունելով հրապարակվող բժշկական գրականությունը, ԱՄՆ ազգային և պետական ուղեցույցները և փորձագետների համաձայնությունը:

Ուղեցույցի 21 բաժնում ներառված են նոր կորոնավիրուսային հիվանդության կլինիկական ընթացքի, ախտորոշման և բուժման վերաբերյալ տեղեկատվություն և տվյալներ հարակից նեղ մասնագիտական ոլորտներից:

Այս նախաձեռնության արդյունքում բուժաշխատողներին հասանելի կլինի հայերեն լեզվով **COVID-19**-ով պացիենտների վարման վերաբերյալ Հարվարդի կլինիկական հիվանդանոցի ուղեցույցը: Այն կրթական նպատակ ունի, չի փոխարինում իրական բժշկական պրակտիկային և Հայաստանում առկա հաստատված ուղեցույցներին:

Քանի որ նոր կորոնավիրուսի վերաբերյալ մեզ հայտնի տվյալները մշտապես փոփոխվում են, ուղեցույցը պարբերաբար թարմացվում է՝ ընդգրկելու համար նոր կամ վերանայված տվյալները:

Ուղեցույցի հայերեն տարբերակը շուտով հասանելի կլինի covidprotocols.am կայքում:

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հունիսի **20-ի** դրությամբ

551 ՆՈՐ ԴԵՊՔ

13 ՆՈՐ ՄԱՀ

19708 ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

93786 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

10409 ԲՈՒԺՎՈՂ ԱՆՁ

8854 ԱՊԱՔԻՆՎԱԾ ԱՆՁ

332 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՀԵՐԻ ԹԻՎԸ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ **060 83 83 00** 24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.: **Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:**
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան, Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**